

Արիւն ծերի եւ մանկան,  
 Արիւն կընոջ, եւ արիւնն  
 Արարատին վըրայ խաչուած Յիսուսին:  
 Ու կը կրկնեն դեռ ագռաւներն յարատել.  
 –”Յառա՛ջ, յառա՛ջ”:  
 Ո՛վ բարբարոս դու Ոգի,  
 Այս Սասունն է, Տաւրոսն է այս, Պրոպոնտոսն,  
 Ամենայն տեղն՝ ուր Յայն հունձքին մէջ կանգուն  
 Յակճիռըս միշտ գալուստիդ՝  
 Կը խընամէ գուցէ գարին վաղորդեան  
 Ձիուդ՝ որուն սըմբակին տակ կը դառնայ  
 Կեանքն հող եւ հո՛ղը մոխիր:  
 Ա՛լ տըրորուած՝ իր վագքին տակ կը կաթեն  
 Վարդերն արիւն, եւ ողկոյզներն արտասուք.  
 Իր գոռ դափրերն անտարբեր  
 Ինկածներուն գանկերուն մէջ կը ճըխան.  
 Ա՛լ կը մաշին պայտերն ոսկրի փըշրումէն,  
 Եւ իր բաշին վրայ կարմիր  
 Անգըղներն հիռ կը դառնան...  
 Այլեւս ահա ամէն ինչ  
 Փըլատակ է, կողոպուտ է, դիակ է,  
 Որոնց վրայ կը փաղփի  
 Յըրդեհն աչքէն արիւն ու բոց հոսելով.  
 Յըրդեհն (իսլամ ցեղերու հի՛ն վըրիժակ)  
 Վարսերը շուրջ կը թօթուէ  
 Եւ վիշապի մըռունչներով կը վագէ  
 Կալերէն գիւղ եւ գիւղերէն քաղաքներ.  
 Երկար թելեր բոցերու  
 Տուն տուներու կը շըղթայեն, կեանք՝ կեանքի,  
 Ու ամէն տեղ, մոխրին վրայ  
 Մեր պըղծըւած Պատիւը լոկ կը սպառնայ.